ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ Բառապաշարի հարստացումը տարրական դասարաններում (2-րդ և 3-րդ դասարաններ)

Հետազոտող ուսուցիչներ՝ Աննա ալեքյան
Արուսյակ Վարդանյան
«Աբովյանի կրթահամալիր» ՊՈԱԿ

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ 1. ԲԱՌԱՊԱՇԱՐ, ՀԱՐՍՏԱՑՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ.....6

ԳԼՈՒԽ 2. ԿԱՊԱԿՑՎԱԾ ԽՈՍՔ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ, ԿԻՐԱՌՎՈՂ ՄԵԹՈԴՆԵՐԸ.....11

2.1 Կապակցված խոսքի զարգացման մեթոդիկա.....11

2.2 Նկարների շուրջ պատմությունների հյուսումը՝ որպես կապակցված խոսքի զարգացման արդյունավետ հնար.....12

ԳԼՈՒԽ 3. ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՀԱՐՍՏԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՎԱԾ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵՐ ՓՈՐՁԸ.....14

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....20

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշակերտի խոսքի զարգացումը մայրենի լեզվի դասավանդման ամենակարևոր հարցն է:

Խոսքը կառուցվում է բառապաշարից ընտրված համապատասխան բառամթերքով, ժողովրդական մանրապատումներով ու դարձվածքներով, քերականական ձևերով, ոճական հնարքներով և այլն: Խոսքը պետք է լինի գեղեցիկ և իմաստալից: Այն մարդու զարգացածության չափանիշն է, մտքի գեղանկարչությունը, նրա գեղագիտական դրսևորումը: Գրագետ ու գեղեցիկ խոսքը մտքի կազմակերպվածության արտահայտությունն է:

Մեր աշխատանքում քննել ենք բառապաշարի հարստացումը, կապակցված խոսքը, դրա դերն ու նշանակությունը կրտսեր դպրոցում:

Կապակցված խոսքը իմաստային և կառուցվածքային միասնություն է: Խոսքը կապակցված է համարվում, երբ այն հաղորդում է որևէ թեմա, ձևավորում է տվյալ լեզվի տրամաբանական և քերականական օրենքներով, ունի ինքնուրույնություն, ավարտունություն և կարող է բաժանվել մտքով իրար հետ կապված որոշակի հատվածների՝ խոսքի շարահյուսական և քերականական ճիշտ կառուցվածքով: Առանց այս բաղադրիչների բավարար զարգացվածության՝ խոսքը չի կարող կապակցված լինել:

Կարևոր է, որ ուսուցչի և սովորողի միջև լինի դրական հաղորդակցություն և համագործակցություն: Եթե նույնիսկ դասավանդողը հրաշալի մասնագետ է, իսկ աշակերտը՝ շնորհալի, միևնույնն է, լավագույն արդյունք ակնկալել հնարավոր չէ, եթե ուսուցումը զարգացնող չէ: Գլխավորը դասավանդման ճիշտ ու արդյունավետ մեթոդներ ընտրելն է:

Թեմայի արդիականությունը: Մեր օրերում խնդիր է դարձել կրտսեր դպրոցականի ուսուցման արդյունավետության բարձրացումը, հատկապես նրանց կապակցված խոսքը,ինչը կդառնա ամուր հիմք աշակերտի խոսքի հետագա զարգացման ճանապարհին: Հաշվի առնելով այս խնդիրը՝ փորձել ենք մեր աշխատանքում ներկայացնել տարրական դասարաններում բառապաշարը հարստացնող բազմաթիվ մեթոդներ, միջոցներ և հնարներ: Դրանց ճիշտ կիրառման

դեպքում ուսուցիչը կարող է հարստացնել աշակերտների բառապաշարը, ինչի արդյունքում էլ կհարստանա, հետևաբար նաև կզարգանա նրանց կապակցված խոսքը:

Հետազոտման նպատակներն են.

- ✓ Որոնե՛լ, գտնե՛լ և ներկայացնե՛լ կրտսեր դպրոցականի կապակցված խոսքի անհարթությունները կամ շեղումները:
- ✓ Ներկայացնե՛լ կապակցված խոսքի դերն ու նշանակությունը տարրական դպրոցում:
- ✓ Արդյունավետ մեթոդների և հնարների միջոցով հարստացնել կրտսեր դպրոցականի բառապաշարը, զարգացնել նրանց կապակցված խոսքը:

Հետազոտման խնդիրներն են.

- ✓ Կրտսեր դպրոցականի կապակցված խոսքի անհարթությունները ուղղելու համար օգտագործել մի շարք մեթոդներ և հնարներ:
- ✓Ներկայացնել կրտսեր դպրոցականի կապակցված խոսքի առանձնահատկությունները, դրանց դերն ու նշանակությունը:
- ✓Գտնե՛լ և առաջարկե՛լ արդյունավետ մեթոդներ և հնարներ կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացման և կապակցված խոսքի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

Հետազոտման օբյեկտը: Հետազոտման օբյեկտ են հանդիսացել <<Աբովյանի կրթահամալիր>> ՊՈԱԿ –ի երկրորդ և երրորդ դասարանի աշակերտները:

Հետազոտման մեթոդոլոգիական հիմքը: Հետազոտման մեթոդոլոգիական հիմքն են հանդիսանում, հայոց լեզվի ուսուցման մեթոդիկային նվիրված ուսումնական ձեռնարկներ, աշխատություններ, դասագրքեր, դասախոսություններ, հոդվածներ, ինքնուրույն ընթերցանության նյութեր: Այդ հեղինակներից են՝ Ջ. Գյուլամիրյանը, Մ. Միրումյանը և այլոք:

Հետազոտման մեթոդները: Հետազոտման ընթացքում մեր կողմից կիրառվել են հետևյալ մեթոդները:

Խմբավորման մեթոդ	Դերային խաղեր, Իմ օրագիրը մեթոդ	Գուշակման մեթոդ Կառուսելը մեթոդ



Աշխատանքի կառուցվածքը և ծավալը: Մեր աշխատանքը կազմված է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից: Մեր աշխատանքը բաղկացած է 19 էջից:

ԳԼՈՒԽ 1. ԲԱՌԱՊԱՇԱՐ, ՀԱՐՍՏԱՑՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Բնագրի շուրջ տարվող աշխատանքները որպես բառապաշարի զարգացման միջոց

Աշակերտների բառապաշարի հարստացման աշխատանքները կատարվում են ընթերցանության դասի բոլոր փուլերում՝ և՛ նոր նյութ հաղորդելիս՝ ակտիվ երկկողմյան զրույցների միջոցով, և՛ ընթերցելիս ու պատմելիս, և՛ բառային աշխատանքի ու բնագրերի վերլուծության ժամանակ:

Նոր նյութի հաղորդման ժամանակ՝ մինչև բնագրի առաջին ընթերցումը, ուսուցիչն անցկացնում է ակտիվ երկկողմանի հարցազրույց, որպեսզի աշակերտների հոգում համապատասխան հույզեր ու զգացմունքներ առաջանան, նրանք ընկալեն ստեղծագործության բովանդակությունն ու կերպարները:[3, էջ 30]

Ուսուցչի նախապատրաստական զրույցը շատ կարևոր է, հատկապես առաջին դասարանում, երբ դպրոց նոր եկող երեխան չունի անհրաժեշտ բառապաշար՝ իր մտքերը արտահայտելու համար, և ամեն րոպե սովորում է ուսուցչից՝ որպես ներքին խոսք հաճախ կրկնելով նրա ասածը,բառերը դարձնում է իր սեփականությունը: Տառուսուցումից հետո նախապատրաստական զրույցին հաջորդում է աշակերտների կողմից բնագրի ընթերցում:

Տարրական դասարաններում բնագրի ընթերցումը կարելի է իրականացնել մի քանի եղանակով՝ բարձրաձայն, մտքում, շարունակելով, բացատրելով կամ մեկնաբանելով, ընտրովի, դերերով:[5, էջ 70]

Տարրական դասարաններում բառապաշարի հարստացման ուղղությամբ հիմնականում աշխատանք է տարվում մայրենիի դասագիքերում բնագրի վերլուծության ժամանակ: Այս աշխատանքն իրականանում է ընդամենը տեքստի մակարդակում: Կրտսեր դպրոցականների կապակցված խոսքի զարգացման մեթոդիկան նախատեսում է նաև հատուկ աշխատանք մի շարք ուղղություններով՝ անծանոթ բառի առանձնացում, իմաստի բացատրում, իմաստավորում, բառակազմական վերլուծություն, բառերի համեմատում՝ բառակազմական տարբերությունների բացահայտման նպատակով, բացատրություն կռահման ճանապարհով, նորածանոթ բառերի բացատրություն տեղեկատվական նյութերի

միջոցով, առարկայի, նկարի կամ գործողության ցուցադրումով, հականիշ բառերի ընտրությամբ:

Բառային աշխատանքի բոլոր ուղղությունները տարրական դասարաններում պետք է իրականացնել գործնական ճանապարհով գլխավորապես հենվելով մայրենիի դասագրքերում զետեղված գեղարվեստական բնագրի վրա՝ առանց տեսական տեղեկություններ, սահմանումներ, քերականական եզրույթներ հաղորդելու:

1.**Անծանոթ բառի առանձնացում, իմաստի բացատրում, իմաստավորում:** Այս խնդիրներն իրականացվում են ինչպես դասագրքի համապատասխան էջի տողատակում անծանոթ բառի բացատրությունը տալով, այնպես էլ դասանյութի մեթոդական կառույցում դրանց շուրջ տարվող բառակազմական, բառաբարդման, վերլուծական, համադրական աշխատանքներով, օրինակ՝ <<Մագնիսկան բառ>> մեթոդի կիրառում: Եթե համակարգված ներկայացնենք, ապա կարելի է շարադրել պրակտիկայում կիրառելի բառիմաստի բացատրության հետևյալ հնարները.

ա Բառի բացատրություն՝ առարկան, առարկայի կամ երևույթի նկարը ցույց տալու ճանապարհով. օրինակ՝ ուշ աշուն բառակապակցությունը բացատրվում է՝ ուշ աշնանային բնությունը պատկերող նկար ցույց տալով:

բ Բառի ստուգաբանում, որի ժամանակ բառիմաստը բացատրվում է բառակազմական վերլուծության ճանապարհով:

գ Բառի բացատրություն այլ՝ իմաստով մոտ բառերի օգնությամբ:

դ Բառի բացատրություն իմաստային մեկնաբանությունների միջոցով. օրինակ՝ հերոս-մարդ. մարդ, որը բոլորից տարբերվում է իր քաջ, անվախ արարքներով:

ե Բառի բացատրություն հականիշների և հոմանիշների միջոցով:

զ Բառի բացատրություն նկարելով:

2.Բառակազմական վերլուծություն, որի հիման վրա բացահայտվում է անծանոթ բառի նշանակությունը: Տարրական դասարաններում սովորաբար տրվում է այսպիսի հարց. <<Ո՞ր բառերից է կազմվել այս բառը>> կամ <<Ինչու՞ են այսպես անվանել. ձնծաղիկ, համագյուղացի, լուսաբաց, արևածագ>>:

3.Բառերի համեմատում՝ բառակազմական տարբերությունների բացահայտման նպատակով, որն ստեղծում է նույնարմատ բառերի իմաստների սահմանազատման հնարավորություն (արծաթյա և արծաթափայլ, անտառ և անտառապահ, ծաղիկ և ծաղկավոր և այլն:

4.Բացատրություն կռահման ճանապարհով: Ուսուցիչը կարդում է անծանոթ բառը պարունակող նախադասությունը և հարցնում աշակերտներին . <<Ի՞նչ եք կարծում, ի՞նչ կարող է նշանակել այս բառը: Կռահեք բառի իմաստը՝ մեկ անգամ ևս կարդալով նախադասությունը:

5.**Նորածանոթ բառերի բացատրություն տեղեկատվական նյութերի միջոցով**, այսինքն՝ բառարաններով, դասագրքի տողատակում կամ հավելվածում տված բացատրություններով, մանկական հանրագիտարանների հոդվածներով և այլն:

6. **Առարկայի, նկարի, խրտվիլակի կամ գործողության ցուցադրումը** կնպաստի սովորողների ճանաչողական ակտիվության զարգացմանը, եթե այդ գործընթացին նրանք մասնակցում են ինքնուրույնաբար և ստեղծագործաբար. իմաստը բացատրող բառերն ընտրել են իրենք, նկարել են ինքնուրույն՝ առանց ուսուցչի կամ ծնողի մասնակցության, պատմում են, թե ինչ պետք է նկարեն, ինչ գույներ պետք է օգտագործեն և այլն:

7.**Հականիշ զույգերի ընտրություն** . լավ-վատ, գեղեցիկ-տգեղ, լույս –խավար և այլն:

8.**Մեկնաբանող նկարագրություն.** Այս հնարն արժեքավոր է նրանով, որ ստեղծում է անկաշկանդ զրույցի հնարավորություն: Աշակերտները փորձում են ինքնուրույն խոսք կառուցել, բացատրել այս կամ այն բառի իմաստը:

Տարրական դպրոցի աշակերտները, որպես կանոն, խուսափում են նկարագրությունները վերարտադրելուց: Սակայն նկարագրական խոսքը հարուստ է ածականներով, մակդիրներով, համեմատություններով, որոնք էլ հարստացնում, գեղեցկացնում են խոսքը: Ուստի պիտի կարևորել նաև նկարագրական խոսք կառուցելու կարողության ձևավորումը [1, էջ 301]:

Որպեսզի հաջողությամբ լուծվի այս խնդիրը, ուսուցիչը պետք է ուղղորդի, որ երեխաները պատմելիս, խոսելիս, օգտագործեն ոչ միայն ածականներ, այլև բայեր, գոյականներ, մակբայներ, համեմատություններ, փոխաբերություններ և

ամբողջությամբ վերարտադրեն կարդացած ստեղծագործության մեջ զետեղված նկարագրությունները:

Բառային աշխատանքի փուլի հաջորդ խնդիրն է ստուգել , թե արդյո՞ք երեխաները հասկացել են տվյալ բառի իմաստը և այն կարող են օգտագործել խոսքում: Այդ նպատակով պիտի առաջարկել բառերն օգտագործել սկզբում բառակապակցությունների, այնուհետև նաև նախադասությունների, կապակցված խոսքի մեջ: Այս հնարը նպաստում է նորածանոթ բառերը խոսքում ըստ իմաստի ճիշտ օգտագործելու, այլ բառերի հետ կապակցություններ ստեղծելու կարողությունների ձևավորմանը: Այս նպատակով տրվող առաջադրանքները պետք է ձևակերպել այնպես, որ աշակերտները բառերը ոչ թե պարզապես օգտագործեն խոսքում, այլ իրականացնեն մտավոր որոշ գործողություններ, օրինակ՝ <<Պատմվածքի անիվ>>մեթոդական հնարը: Սա բառապաշարի հարստացման մի ուղի է, որի դեպքում նաև պարզ է դառնում, թե աշակերտները արդյոք հասկանում են բառի իմաստն ըստ ամենայնի և կարող են նորածանոթ բառերն օգտագործել խոսքում՝ ըստ դրանց նրբերանգների:Այս աշխատանքը նպաստում է աշակերտների խոսքի և լեզվամտածողության զարգացմանը, հարստացնում է նրանց ակտիվ բառապաշարը, զարգացնում է երևակայությունն ու մտածելու կարողությունը:

Հականիշների և հոմանիշների ուսուցումը որպես բառապաշարի հարստացման միջոց

Բառապաշարի հարստացման և ճշգրտման ուղղությամբ տարվող աշխատանքի մեջ մտնում են նաև հոմանիշների և հականիշների յուրացման հետ կապված տարաբնույթ վարժությունները: [5, էջ 65]

Հոմանիշները: Կրտսեր դպրոցում հոմանիշների մասին նույնպես տեսական գիտելիքներ չեն տրվում, դրանց ուսուցումն իրականցվում է գործնական ճանապարհով:

1.Ընտրե՛լ և խմբավորե՛լ իմաստով մոտ բառերը.

Ուսուցչի կողմից տրվում են քարտեր,որոնց վրա գրված են առարկա, գործողություն կամ հատկանիշ ցույց տվող բառեր և պահանջվում է քարտերի միջից

գտնել համապատասխան զույգին՝ հոմանիշը կամ հականիշը,որին տրվում է հատակ ժամանակ:

2. Տրված նախադասությունում բառը փոխել իր հոմանիշով. Ուսուցիչը տալիս է նախադասությունը, աշակերտները ընդգծված բառը փոխարինում են իմաստով մոտ հարմար բառով : Օրինակ՝ Եկավ **զով** աշունը: Զով բառը պիտի փոխարինեն հոմանիշ բառերով (պաղ , սառ, զովաշունչ, զովասուն, հով , պաղպաջուն և այլն):

Հականիշները: Աշակերտներն իրենց խոսքում հականիշները օգտագործում են դեռևս նախադպրոցական տարիքից: Դպրոց հաճախելու առաջին իսկ օրվանից Մայրենի լեզվի դասերին այս կարողությունն աստիճանաբար զարգանում է: Թեև աշակերտները հականիշների հանդիպում են դեռևս գրաճանաչության շրջանում՝ այբբենարանի նյութերն ընթերցելիս, սակայն հականիշների շուրջ տարվող համակարգված աշխատանքն սկսվում է մայրենիի դասագրքերում զետեղված բնագրերի վերլուծությունից:

Հականիշների շուրջ կարելի է կատարել հետևյալ վարժությունները .

1. Խմբավորել հականիշները զույգերով, տրվում է բառերի շարք և հանձնարարվում դուրս գրել հականշային զույգերը: Օրինակ՝ սառը. սև, քաղցր, սպիտակ, տաք, նոր, երիտասարդ, կարճ, սուր, հին , բութ , մաքուր, հաստ, դառն , կեղտոտ, բարակ և այլն :

2.Կազմել տրված նախադասությունների հակառակ իմաստ արտահայտող նախադասություններ: Օրինակ՝ գնաց **շոգ** ու **տաք** ամառը, եկավ **ցուրտ** ու **խիստ** ձմեռը:

Դարձվածների և ասացվածքների ուսումնասիրումը որպես խոսքի հարստացման միջոց

Տարրական դասարանների մայրենիի ծրագրերում դարձվածքաբանական հատուկ աշխատանք նույնպես նախատեսված չէ: Սակայն մայրենիի դասագրքերի բնագրերում օգտագործված դարձվածքների և ասացվածքների իմաստներն անպայման պետք է բացատրվեն,որոնք հիմնականում հանդիպում են բնագրից հետո:Ուսուցիչը կարող է ավելացնել դարձվածքների ցանկը ըստ անհրաժեշտության՝ խոսքն ավելի պատկերավոր դարձնելու համար:

ԳԼՈՒԽ 2. ԿԱՊԱԿՑՎԱԾ ԽՈՍՔ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ, ԿԻՐԱՌՎՈՂ ՄԵԹՈԴՆԵՐԸ

2.1 Կապակցված խոսքի զարգացման մեթոդիկա

Կապակված խոսք ասելով՝ սովորաբար հասկացվում է հեղինակի մտահաղացման շրջանակներում մտքով իրար հետ կապված, որոշակի հաջորդականություն ունեցող նախադասություններով ձևակերպված ամփոփ միտք:

Տեսակներ են՝ պատմվածքը, հոդվածը, նամակը, զեկուցումը, հաշվետվությունը, նաև ծավալուն բանավոր պատասխանը, շարադրությունը, փոխադրությունը և այլն:

Տարածված կարծիքն, որ շատ կարդալը նպաստում է բանավոր խոսքի զարգացմանը, ընդհանուր իմաստով ճիշտ է, քանի որ շատ կարդացող մարդը յուրացնում է որոշակի բառապաշար,խոսքային կառույցներ և ունի հստակ <<խոսելու նյութ>>: Շատ կարդալու և զարգացած կապակցված խոսք ունենալու կարողության միջև ակնհայտ գործոններ չկան, մանավանդ եթե կարդացածի շուրջ քննարկումներ չիրականացվեն: Հակառակ դեպքում կարելի է մտածել, որ շատ խոսող երեխան ևս ունի լավ խոսք: Բայց որքան էլ երեխան շատ խոսի, եթե ուսուցիչները, մեծերը չշտկեն նրա խոսքային սխալները, հարցադրումների օգնությամբ չխթանեն նրա խոսքային գործունեությունը, երեխայի խոսքը կմնա, տրամաբանությունից զուրկ:[4, էջ 125]

Կրտսեր դպրոցականների կապակցված խոսքի զարգացման ուղղությամբ տարրական դպրոցում իրականացվում են խոսքային վարժությունների հետևյալ տեսակները.

- ուսուցչի տված հարցին տալ եռաստիճան պատասխան՝ 2-3 բառով, 2-3 նախադասությամբ և պատմվածքի տեսքով:
- կարդացած ստեղծագործության հիմնական մտքի շուրջ 2-3 նախադասությամբ, դատողություններ անել , վերլուծել , կշռադատել,
- <<Իմ օրագիրը>> մեթոդ- հնարի միջոցով,
- առաջարկված նկարի բովանդակությունը վերարտադրել՝ գործածելով ինչպես պատմողական, այնպես էլ նկարագրական և դատողական խոսք,

- գեղարվեստական ստեղծագործության կամ նրա առանձին հատվածները բեմականացնել՝ կարճ և երկար հանձնարարվող թեմայով բանաստեղծություններ, փոքրիկ պատմվածքներ հյուսել,
- փոխադրություններ, շարադրություններ: [1, էջ 305]

Դպրոցականների կապակցված խոսքի զարգացման ուղղությամբ իրականացվող աշխատանքի ընթացքում պետք է հասնել նրան, որ երեխաները `

- հասկանան, իմաստավորեն ընթերցած նյութի կամ խոսակցության թեման, հիմնական միտքը, թափանցեն նրա ենթաշերտերի մեջ, կռահեն ենթատեքստը,
- շարադրության կամ այլ կապակցված բնագիր հյուսելու համար կարողանան հավաքել անհրաժեշտ բառեր, բառակապակցություններ,նկարագրող նախադասություններ և դրանք օգտագործել խոսքը ճիշտ կառուցելու գործում
- Հարցաշարի օգնությամբ կարողանան շարադրել նյութը
- Շարադրանքը կարողանա համապատասխանեցնել տրված վերնագրին,
- Որոշակի ժամանակահատվածում կազմեն բանավոր կամ գրավոր պարզ բնագրեր,ուսուցչի ուղորդմամբ աշխատեն դրանց շտկման, հղկման, ձևավորման վրա:

2.2 Նկարների շուրջ պատմությունների հյուսումը՝ որպես կապակցված խոսքի զարգացման արդյունավետ հնար

Կրտսեր դպրոցականների բառապաշարի հարստացման, խոսքի զարգացման նպատակով օգտագործվում են նկարներ՝մայրենիի դասագրքերում զետեղված նկարները,ինչպես նաև պատկերներով հարուստ ցուցապաստառները: Աշակերտներին հանձնարարվում է պատմել այդ նկարների բովանդակությունը ստեղծագործաբար՝ օգտագործելով ինչպես ծանոթ, այնպես էլ նոր բառեր:

Խոսքի զարգացման նպատակով կատարում են հետևյալ աշխատանքները՝ գեղարվեստական ստեղծագործությունների բովանդակության տպավորությամբ նկարելու, ստեղծագործության էջը նկարազարդելու և դրանք խոսքով ներկայացնելու ուղղությամբ առաջադրանքներ: Աշակերտների վերացական մտածողությունը զարգացնելու և այդ ամենը խոսքային միջոցներով ներկայացնելու կարողության մշակման նպատակներով կարելի է աշակերտներին տալ այնպիսի առաջադրանքներ,

ինչպիսին է օրինակ `<<Նախ պատմի՛ր, թե ինչ ես նկարելու, ապա՝ նկարի՛ր>>: Երեխաների ստեղծած նկարների շուրջ տարվող աշխատանքներում իր մեծ տեղն ունի հարցը: Դրանք տրվում են `



Այսպիսի աշխատանքի կազմակերպման գերխնդիրն է կրտսեր դպրոցականների հաղորդակցական-խոսակցական խնդիրների համակարգից դեպի վերլուծական–ստեղծագործական–կառուցողական խոսք տանելը:

ԳԼՈՒԽ 3. ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՀԱՐՍՏԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՎԱԾ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵՐ ՓՈՐՁԸ

Պարզելու համար, թե արդյոք աշակերտները հասկացել են, այն անծանոթ բառերը, ասացվածքները, դարձվածքները, առածները, որոնք անցած նյութերի ժամանակ սովորել են, այսինքն՝ այդ նորածանոթ բառերը մտել են աշակերտների ակտիվ բառապաշար, նրանք օգտագործում են այդ բառերը իրենց ինքնուրույն կապակցված խոսքում, թե ուղղակի այդ դասի ընթացքում լսել են ուսուցչի բացատրությունը և անցել առաջ՝ առանց իրենցը դարձնելու, մենք կազմեցինք հարցարան, որտեղ փորձել ենք ընդգրկել անցած դասանյութերի անծանոթ բառերը, առածները, ասացվածքները և դարձվածքները:

Հարցարանը կազմված է 10 հարցից: Հարցարանի մեջ ընդգրկված են և՛ բաց հարցեր, և՛ այնպիսի հարցեր, որոնց համար տրված են 3 տարբերակներ, որոնցից միայն մեկն է ճիշտ: Ընդհանուր դասարանի մակարդակը որոշելու համար, սահմանեցինք երեք աստիճան՝ գերազանց, լավ և բավարար: Քանի որ հարցարանը կազմված էր տասը հարցից, յուրաքանչյուր հարցին տրվում է մեկ միավոր: Գերազանց արդյունք համարվում է 9-10 ճիշտ պատասխանի դեպքում: Լավ արդյունքը համարվում է 7-8 ճիշտ պատասխանի դեպքում, իսկ բավարար՝ 4-6 ճիշտ պատասխանի դեպքում:

Հարցարան

2-րդ դասարան

1.Ո՞րն է աշխույժ բառի հոմանիշը:

ա)սիրուն բ)ուրախ գ)տխուր

2.Ո՞րն է վերջ բառի հականիշը:

ա)ծայր բ)առաջ գ)ավարտ

3.Գծով իրար միացրու՛ առածները:

Շատ կարդաս,	Սարեր շուռ կտանք:
Պստիկ է,	յոթն էլ տանձի մասին:
Ուս ուսի որ տանք,	բայց ճստիկ է:
Արջը յոթ երգ գիտի,	շատ բան կիմանաս:

4. Բացատրե՛լ <<Հինգ մատի պես գիտենալ>> դարձվածքը:

_____

_____

5.<<Անտառապահ>> բառի տառերով ո՞ր բառն է կազմվել:

ա)տապան 5 բ)տնակ գ)տակառ

6 Վերծանի՛ր խառնագիրը և գտիր <<ավելորդ>> բառը:

ա)րգքի բ)տնձա գ)րգլե դ) թթուղ

7. Գրի՛ր մեկ բառով:

ա)միտք անել - բ)հերոս դառնալ- գ)լող տալ-

8. Նախադասությունում տեղադրիր համապատասխան բառը՝

Մայր հավիկը իր ճուտիկներին փրկեց արծվի...

ա)ձեռքից բ)ճանկից գ)թաթից

9.Տրված բառերին տալ համապատասխան հատկանիշ:

մայրիկ _____ , աշուն _____ զինվոր _____

10. Նախադասությունն ավելացրու ևս երեք բառով:

Աշունը մտավ….

_____

Հարցարան

3-րդ դասարան

1.Ո՞րն է կալվածք բառի հոմանիշը:

ա)տուն բ)թագավորին պատկանող հողը և ունեցվածքը գ)բացատ

2.Ո՞րն է զառամյալ բառի հականիշը:

ա)ծեր բ)հիվանդ գ)երիտասարդ

3.Գծով իրար միացրու՛ առածները:

Գյուղ կանգնի՝ մեկ կտրիր:

Ով աշխատի, ոչ ոք չհավատաց:

Յոթ չափիր, նա կուտի:

Սուտասանի տունը կրակ ընկավ, գերան կկորտրի:

4. Բացատրե՛լ <<Հինգ մատի պես գիտենալ>> դարձվածքը:

_____

_____

5.<<Հարստություն>> բառի տառերով ո՞ր բառն է կազմվել:

ա)հարուստ բ)տնակ գ)սարսուռ

6.Վերծանի՛ր խառնագիրը և գտիր <<ավելորդ>> բառը:

ա)րգքի բ)տնձա գ)րգլե դ) թթուղ

7.Գրի՛ր մեկ բառով:

ա)միտք անել - բ)հերոս դառնալ- գ)լող տալ-

8.Նախադասությունում տեղադրիր համապատասխան բառը՝ Մայր հավիկը իր ճուտիկներին փրկեց արծվի...

ա)ձեռքից բ)ճանկից գ)թաթից

9.Տրված բառերին տալ համապատասխան հատկանիշ:

մայրիկ _____ , աշուն _____ զինվոր _____

10. Նախադասությունն ավելացրու ևս երեք բառով:

Աշունը մտավ….

_____

Հարցարանի վերլուծություն

Դասարանների 54 աշակերտներից հարցարանը լրացրին 47-ը:

	Ճիշտ է	Սխալ է	Չգիտեմ
1-ին հարց	42	1	4
2-րդ հարց	28	8	11
3-րդ հարց	41	4	2
4-րդ հարց	38	6	3

5-րդ հարց	34	8	5
6-րդ հարց	26	11	10
7-րդ հարց	35	4	8
8-րդ հարց	30	8	9
9-րդ հարց	34	6	7
10-րդ հարց	21	17	9

Հաշվելով և վերլուծելով դասարանների ընդհանուր տվյալները տոկոսային հարաբերությամբ, ստացանք հետևյալ արդյունքները, որը ցույց է տրված գծապատկերի վրա՝



Ինչպես նկատեցինք, աշակերտները հասկացել էին անծանոթ բառերը, նշել էին ճիշտ պատասխանները, իսկ այն հարցերը, որոնք բաց էին, և աշակերտները իրենք պիտի շարադրեին իրենց մտքերը, քչերն էին, ովքեր ճիշտ էին պատասխանել, այսինքն նրանց ինքնուրույն կապակցված խոսք կառուցելու կարողությունը բավարար չափով զարգացած չէ:

Քանի որ նախագծային աշխատանքը լայն հնարավորություն կարող է տալ զարգացնելու աշակերտների կապակցված խոսքը, կարող ենք այս դասարաններում իրականացնել նախագծային աշխատանք՝ ընտրելով հետևյալ թեմաներից որևէ մեկը «Հայրենի՛ք, ես մի զարկն եմ քո բազկի»,«Ժողովուրդն իմաստուն է» :

Ընտրեցինք նախագծային մեթոդը, որպեսզի աշխատելիս աշակերտներն ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ ձեռք բերեն նոր տեղեկատվություն, յուրացնեն

այն, վերլուծեն և ներկայացնեն կապակցված խոսքի տարբեր ոճերով: Այն նաև հարմար է երկրորդ և երրորդ դասարանների ինտեգրված ուսուցման համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հասարակական-քաղաքական կյանքում կատարվող տարաբնույթ երևույթներն ազդում են հատկապես նոր սերնդի խոսքի, մտածողության, ազգային արժեքների նկատմամբ մոտեցումների և հոգևոր ընկալումների վրա:

Այսօր նորագույն տեխնոլոգիաների և մշակույթի բուռն զարգացումը նպաստում է մեր հասարակության զարգացմանը: Օրեցօր զարգանում է տեխնիկան, տնտեսությունը, մշակույթը: Այս ամենի հետ կապված զարգանում և հարստանում է մարդու բառապաշարը, կապակցված խոսքը: Այս ամենի կողքին պետք է նշել, որ մերօրյա երեխաներին շատ է հետաքրքրում համակարգիչը, տեխնիկական զանազան միջոցները: Եվ այս ամենի հետ կապված այսօր երեխաները ավելի շատ ժամանակ են անցկացնում համակարգչի դիմաց, քան զբաղվում են ընթերցանությամբ: Ընթերցանությունը համարվում է լավագույն միջոցներից մեկը, աշակերտների բառապաշարի հարստացման և կապակցված խոսքի զարգացման համար: Այսօրվա սերունդը էապես տարբերվում է նախորդներից, հետևաբար այս առումով շատ կարևոր է ուսուցման ակտիվ, փոխներգործուն մեթոդների, եղանակների ընտրությունը, քանի որ դրանց ճիշտ ընտրությունից են կախված երեխաների հաջողություններն ուսուցման հետագա ողջ գործընթացում:

Բառապաշարի հարստացման և կապակցված խոսքի զարգացման համար շատ նպաստավոր էին մեր ընտրված մեթոդները: Նրանք հնարավորություն էին տալիս, որպեսզի աշակերտները ինքնուրույն ձեռք բերեին նոր տեղեկատվություն ուսումնասիրվող նյութի վերաբերյալ, վերլուծեին և ներկայացնեին կապակցված խոսքով:

Սակայն,մեթոդները կիրառելիս, եկանք այն եզրակացության,որ քչերը կարողացան օգտագործել հարուստ բառապաշար և շարադրել իրենց մտքերը:

Այդ պատճառով ցանկանում ենք անցկացնել նախագծային մեթոդով դաս, որպեսզի աշակերտների կապակցված խոսքը էլ ավելի զարգանա:

Այսպիսով՝ մեր ուսումնասիրությունների արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացությունների.

1. Տարրական դասարաններում կրտսեր դպրոցականներին այնպիսի կարողություններով ու հմտություններով պետք է զինել, որոնք կնպաստեն նրանց ինքնուրույն ուսումնական գործունեություն ծավալելուն:
2. Հարցարանի միջոցով պարզեցինք, որ աշակերտները հասկանում են, գիտեն բառերը, դրանց բացատրությունները, շատ լավ գիտեն առած, ասացվածքները, դարձվածքները և ճիշտ են պատասխանում այդ հարցերին, սակայն բաց հարցերին, որտեղ նրանք պիտի շարադրեն իրենց ինքնուրույն մտքերը, դժվարանում են և չեն կարողանում գրել, այսինքն՝ նրանց կապակցված խոսքի հմտությունները բավարար չափով զարգացած չեն:
3. Կապակցված խոսքի զարգացման և բառապաշարի հարստացման համար նպատակահարմար է կիրառել նախագծային մեթոդը, այն հնարավորություն է տալիս աշակերտներին աշխատել ինքնուրույն, փնտրել, գտնել, ստեղծագործել:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գյուլամիրյան Ջ. Հ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան 2015:
2. Գյուլամիրյան Ջ. Հ., Կարդալու կարողությունների և խոսքի զարգացումը տարրական դասարաններում, Եր., 1998 :
3. Խարազյան Ռ. Փ., Աշակերտների բառապաշարի հարստացումը տարրական դասարաններում, Եր., Աստղիկ 2003:
4. Ղարիբյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Եր., 1968:
5. Միրումյան Մ. Վ., Հոմանիշ, հականիշ և համանուն բառերի ուսուցումը, որպես խոսքի զարգացման միջոց, Եր., <<Զանգակ-97>> 2005: